## ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐՈՒՄ

Հունվարի 10-ին Արմավիր քաղաքի մշակույթի տանը տեղի ունեցավ հանդես՝ նվիրված Ամանորին և Սուրբ Ծննդյան տոնին: Հանդեսը կազմակերպվել էր Արմավիրի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Խորեն քհն. Մարուքյանի և «Ս. Մարիամ Աստվածածին» կիրակնօրյա վարժարանի տնօրեն Գեղամ Հայրապետյանի նախաձեռնությամբ:

Հանդեսին ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Արշակ աբեղա Խաչատրյանը, քահանաներ, սարկավագներ, ծնողներ և սաներ: Միջոցառումն սկսվեց «Հայր մեր»-ով, որից հետո ներկաներն ունկնդրեցին «Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի», «Այսօր տոն է» և այլ շարականները, ցուցադրվեց փոքրիկ ներկայացում, հնչեցին ավետիսներ և հոգևոր գեղեցիկ բանաստեղծություններ:

Հանդեսի վերջում կիրակնօրյա վարժարանի աշխատակազմի անունից մաղթանքի և շնորհակալանքի խոսք ասաց վարժարանի տնօրեն Գեղամ Հայրապետյանը՝ հավաստիացնելով, որ ողջ ուսուցչական կազմը սիրով նվիրվել է և կնվիրվի մատաղ սերնդին քրիստոնեական ոգով դաստիարակելու գործին՝ աջակից ունենալով Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու մեր նվիրյալ հայրերին:

Այնուհետև օրհնանքի խոսք ասաց Արշակ աբեղա Խաչատրյանը: Հայր Սուրբը մեկնաբանեց Սուրբ Ծննդյան խորհուրդը՝ ասելով, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ծննդյամբ է, որ մարդկությունն ազատվում է մեղքերից և ձեռք բերում հոգու խաղաղություն ու համերաշխություն: Վերջում նա իր օրհնանքի և բարեմաղթանքի խոսքերը հղեց բոլոր ներկաներին:

Հանդիսության մասնակիցները դահլիճից հեռացան սիրով և բարությամբ ջերմացած սրտերով:

Թող Քրիստոսի սերը և լույսը փարոս լինեն մեր հայորդիների համար:

*ՄԵՏԱՔՍՅԱ ԽԵՉՅԱՆ*